Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-963-05.05.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի վերջին պարբերության «վերարտադրում են» բառից հետո վերջակետ կետադրական նշանը փոխարինել լ միջակետով կետադրական նշանով եւ լրացնել հետեւյալ պարբերությունները.

«կանեփ՝ կանեփ բույսի ծաղկող կամ պտղատու գլխիկները, որոնցից բուսախեժը քամված չէ, անկախ դրանց համար օգտագործվող անվանումից

կանեփի բույս՝ կանեփ (Cannabis) ցեղի ցանկացած բույս.

կանեփի բուսախեժ՝ քամված բուսախեժը՝ զտած կամ չզտած, որն ստացվել է կանեփի բույսից.

արտադրական կանեփի բույսի կտրոն՝ կանեփի բույսից առանձնացված մաս (ցողուն՝ տերևներով), որը օգտագործվում է վեգետատիվ բազմացման նպատակով

արտադրական կանեփ՝ սույն օրենքով նախատեսված նպատակների համար նախատեսված կանեփի մշակաբույս որում կաննաբիդիոլի (CBD) պարունակությունը գերազանցում է տետրահիդրոկաննաբինոլի (THC) պարունակությանը, ընդ որում՝ տետրահիդրոկաննաբինոլի (THC) տոկոսային պարունակությունը նմուշառված զանգվածում հավասար կամ ցածր է 0,3 տոկոսից

արտադրական կանեփի մշակություն՝ կանեփի բույսի աճեցման ամբողջ գործընթացը

արտադրական կանեփի վերամշակման գործընթաց՝ արտադրական կանեփի բուսախեժի առանձնացումը բույսերից, որոնցից այն ստացվում է, ինչպես նաեւ այն գործընթացները, որոնց արդյունքում ստացվում է յուղ, թուղթ, շինանյութ, թել կամ այլ վերամշակվող նյութեր

իրական շահառու՝ «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի իմաստով իրական շահառու հանդիսացող անձ

փոխկապակցված անձ՝ անձի հետ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ, 26-րդ, 27-րդ կետերի իմաստով փոխկապակցված համարվող անձ:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով.

«*Հոդված 8.1 Թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հետ կապված գործունեության բնագավառում լիցենզիաների տրամադրման խորհրդատվական հանձնաժողովը*

Լիցենզավորող մարմնին թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հետ կապված գործունեության բնագավառում լիցենզիաների տրամադրման վերաբերյալ

խորհրդատվական եզրակացություն տալու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել հանձնաժողով: Խորհրդատվական եզրակացություն տալու դեպքերը եւ կարգը նախատեսվում են հանձնաժողովի աշխատակարգով եւ լիցենզավորման կարգով:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի

1. 2-րդ մասի «ժամկետով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:»,

2. 3-րդ մասի «օրենքով» բառից հետո լրացնել « եւ սույն օրենքով:» բառերը:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ, գյուղատնտեսական կամ արդյունաբերական նպատակներով՝ սույն օրենքվ նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ սույն օրենքի 31-33-րդ հոդվածներով նախատեսված նպատակներով:»:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածի

1. հոդվածում «հավաստագիր» բառը իր բոլոր հոլովաձեւերով փոխարինել «թույլտվություն» բառով՝ համապատասխան հոլովաձեւերով:

2. 2-րդ մասը լրացնել չորրորդ պարբերությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Արտահանման կամ ներմուծման թույլտվության տրամադրման համար կարող է գանձվել պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված դեպքերում եւ չափով: Այն դեպքում, երբ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված է արտահանման կամ ներմուծման թույլտվության տրամադրման համար պետական տուրք, ապա արտահանման կամ ներմուծման թույլտվության համար դիմողը պարտավոր է վճարել պետական տուրքը թույլտվության համար դիմելուց առաջ:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել Գլուխ 5.1-ով հետեւյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 5.1.

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՆԵՓԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՆԵՓԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 45.1. Արտադրական կանեփի շրջանառության իրավական կարգավորման առանձնահատկությունները

1. Սույն գլխով սահմանվում են արտադրական կանեփի շրջանառության, արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզավորման, ապօրինի շրջանառության կանխարգելման կարգի առանձնահատկությունները:

2. Սույն գլխով կարող են նախատեսվել արտադրական կանեփի վերաբերյալ սույն օրենքով թմրամիջոցների համար նախատեսված կարգավորումներից տարբերվող կարգավորումներ, որի դեպքում գործում են սույն գլխով սահմանված կարգավորումները:

3. Արտադրական կանեփի արտադրությունը, արտահանումը, ներմուծումը կամ մեծածախ առեւտուրը չեն համարվում դեղերի արտադրություն կամ շրջանառություն եւ չեն կարգավորվում «Դեղերի մասին» օրենքով:

Հոդված 45.2. Արտադրական կանեփի օրինական շրջանառությունը

1. Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրական կանեփի օրինական շրջանառությունը սույն օրենքով սահմանված նպատակներով եւ գործողությունների շրջանակներում՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

2. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության իրականացման համար տրվում են «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաեւ արտադրական կանեփի ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի լիցենզիաներ:

3. Արգելվում է արտադրական կանեփի արտադրությունը անձնական օգտագործման նպատակով:

Հոդված 45.3. Արտադրական կանեփի արտադրությունը

1. Արտադրական կանեփի արտադրությամբ կարող է զբաղվել միայն իրավաբանական անձը, որը ստացել է արտադրական կանեփի արտադրության լիցենզիա:

2. Արտադրական կանեփի արտադրության լիցենզիայով թույլատրվող գործունեության ձեւերն են արտադրական կանեփի մշակությունը և վերամշակումը:

3. Արտադրական կանեփի մշակությունը թույլատրվում է միայն փակ տարածքներում՝ ջերմատներում, տնկարաններում, սածիլանոցներում, որոնց ներկայացվող պահանջները սահմանվում են լիցենզավորման կարգում:

4. Արտադրական կանեփի արտադրության լիցենզիա ստացած անձը կարող է զբաղվել ինչպես մշակությամբ եւ վերամշակմամբ միասին, այնպես էլ այդ գործողություններից մեկով:

5. Արտադրական կանեփի արտադրության լիցենզիա ունեցող անձը կարող է իր արտադրանքը փոխանցել միայն արտադրական կանեփի արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի լիցենզիա ունեցող անձի:

Հոդված 45.4. Արտադրական կանեփի արտադրության գործունեության ձեւերի հետ կապված այլ գործողությունները

1. Արտադրական կանեփի արտադրության լիցենզիան ներառում է նաեւ սույն օրենքի 45.3-րդ հոդվածով նախատեսված գործունեության ձեւերի հետ կապված այլ գործողությունների կատարում, այդ թվում՝

1) արտադրական կանեփի բուսախեժի, թղթի, յուղի, թելի, շինանյութի եւ այլ վերամշակվող նյութերի արտադրության նպատակով արտադրական կանեփի բույսերի, արտադրական կանեփի բույսի կտրոնների, սածիլների կամ սերմերի ձեռքբերում մշակման նպատակով՝ բացառությամբ ներմուծման.

2) արտադրական կանեփ բույսերի, արտադրական կանեփի փաթեթավորում, տեղափոխում, պահեստավորում, տիրապետում.

3) արտադրական կանեփի բույսերի, արտադրական կանեփի կամ արտադրական կանեփի բուսախեժի ոչնչացում.

4) արտադրական կանեփի նմուշառում և լաբորատոր փորձաքննություն՝ որոշելու համար կաննաբիդիոլի կամ տետրահիդրոկաննաբինոլի կոնցենտրացիան՝ տոկոսային պարունակությունը, արտադրական կանեփի բույսերի նմուշառվող հատվածներում, կամ կանեփի բույսերի նմուշների տեղափոխումը փորձաքննություն իրականացնող համապատասխան լաբորատորիա:

Հոդված 45.5. Արտադրական կանեփի ներմուծումը, արտահանումը կամ մեծածախ առեւտուրը

1. Արտադրական կանեփի ներմուծմամբ, արտահանմամբ կամ մեծածախ առեւտրով կարող է զբաղվել միայն այն իրավաբանական անձը, որը ստացել է արտադրական կանեփի ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի լիցենզիա:

2. Արտադրական կանեփի բույսի, արտադրական կանեփի բույսի կտրոնների, սածիլների և սերմերի ներմուծում Հայաստանի Հանրապետություն թույլատրվում է արտադրական կանեփի ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի լիցենզիայի առկայության դեպքում

3. Արտադրական կանեփի արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի իրականացման գործունեության իրականացման համար լիցենզիա ունեցող անձը կարող է իր արտադրանքը փոխանցել միայն արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաեւ արտադրական կանեփի ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի գործունեություն իրականացնելու համար լիցենզիա ունեցող անձի:

Հոդված 45.6. Արտադրական կանեփի արտադրության եւ ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի լիցենզավորման առանձնահատկությունները

1. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման համակարգի մարմինը:

2. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիաները տրվում են մինչեւ տասը տարի ժամկետով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված լիցենզավորման կարգում արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզավորման համար նախատեսվում են պահանջներ, այդ թվում՝ լիցենզիա ստանալու համար դիմողի կողմից բիզնես-ծրագրի ներկայացման եւ դրա բովանդակության, հիմնավորումների, դիմողի ֆինանսական վիճակի, կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) նվազագույն չափի վերաբերյալ, ինչպես նաեւ այլ պահանջներ:

4. Անձը կարող է զբաղվել արտադրական կանեփի հետ կապված գործունեությամբ միայն եթե դիմել է արտադրական կանեփի հետ կապված գործունեության տեսակների լիցենզիա ստանալու համար եւ օրենքով սահմանված կարգով ստացել է այդ լիցենզիան՝ անկախ այլ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ պրեկուրսորների հետ կապված գործունեության լիցենզիա ունենալու հանգամանքից:

5. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիայի ստացման համար դիմողը պարտավոր է բացահայտել եւ լիցենզիա ստանալու հայտի հետ միասին լիցենզավորման կարգում սահմանված ձեւով ներկայացնել փոխկապակցված անձանց եւ իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

6.Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա չեն կարող ստանալ այն անձինք, որոնց մասնակիցները, կամ փոխկապակցված անձինք, իրական շահառուները կամ արտադրության կամ ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի ընթացքում կանեփի, կանեփի բույսի, դրա սերմերի հետ անմիջական շփում ունեցող անձինք (այսուհետ՝ աշխատակից).

1) ունեն դատվածություն թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի հետ կապված հանցագործության համար ակախ դատվածությունը հանված կամ մարված լինելու հանգամանքից, կամ ենթարկվել են այդպիսի վարչական իրավախախտման համար

2) տառապում է թմրամոլությամբ:

7. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա ստացած անձինք նախքան արտադրական կանեփի հետ կապված գործունեությանը ներգրավելը լիցենզավորող մարմնին են ներկայացնում աշխատակիցների տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, հասցե, անձնագրային տվյալներ, թմրամիջոցների կամ հոգեմետ դեղերի հետ կապված դիտավորյալ հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվության ենթարկված լինելու կամ այդպիսի վարչական իրավախախտման կատարման համար պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տեղեկություն: Լիցենզավորող մարմինը վարում է աշխատակիցների ռեեստր: Թմրամիջոցների կամ հոգեմետ դեղերի հետ կապված դիտավորյալ հանցագործության կատարման համար դատապարտված կամ այդպիսի վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկված կամ թմրամոլությամբ տառապող անձինք չեն կարող հանդիսանալ աշխատակիցներ: Լիցենզավորման կարգով կարող են նախատեսվել աշխատակիցներին վերաբերող այլ պահանջներ: Աշխատակիցների ռեեստրի տվյալներին հասանելիություն պետք է ունենան նաեւ լիցենզավորված անձի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմինները:

Հոդված 45.7. Արտադրական կանեփի քվոտավորման պահանջը

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը քվոտավորում է արտադրական կանեփի արտադրությունը, ներմուծումը արտահանումը կամ մեծածախ առեւտուրը:

2. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիան տրամադրվում է ըստ քվոտաների:

3. Քվոտավորումը կարող է լինել տարբերակված ըստ մի շարք չափանիշների, այդ թվում՝ ըստ մեկ սուբյեկտի առավելագույն եւ նվազագույն արտադրության կամ ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի ծավալներ/քանակ սահմանելով, ըստ տարիների՝ կոնկրետ սուբյեկտի համար տարբերակված կամ նույնական քվոտա սահմանելով,

4. Քվոտավորման տարբերակումը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

5. Քվոտայի սպառվելը հանդիսանում է լիցենզիայի հայտի մերժման հիմք:

6.Քվոտայով նախատեսված քանակական սահմանափակումների խախտումը համարվում է լիցենզիայի դադարեցման հիմք:

7. Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով քվոտավորման պահանջներ սահմանված լինելու դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրով քվոտավորման կանոնները: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող է նախատեսվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրին համապատասխան քվոտավորմանը վերաբերյալ այլ պայմանների բավարարման պահանջներ:

8. Արտաքին առեւտրի ոլորտում արտադրական կանեփի արտահանելու կամ ներմուծելու սահմանափակումների առկայության դեպքում բացի սույն օրենքով սահմանված լիցենզավորումից անձը պետք է ստանա նաեւ «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքով նախատեսված լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Հոդված 45.8. Պետական վերահսկողությունը արտադրական կանեփի օրինական շրջանառության ոլորտում

1. Արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման և մեծածախ առևտրի լիցենզավորման, քվոտավորման և օրինական շրջանառության կարգավորման նպատակով սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված տեսչական մարմնի կողմից:
2. Տեսչական մարմնի կողմից վերահսկողությունը իրականացվում է ստուգումների, ուսումնասիրությունների և դիտարկումների միջոցով:
3. Տեսչական մարմնի կողմից ստուգումները և ուսումնասիրությունները իրականացվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով:
4. Տեսչական մարմինը իրականացնում է նմուշառում և փորձաքննություն՝ արտադրանքի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին պարզելու նպատակով:
5. Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում փորձաքննությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված լաբորատորիայում՝ մինչև տեսչական մարմնի կողմից լաբորատոր կարողությունների ձևավորումը:
6. Տեսչական մարմինը, վերահսկողություն իրականացնելիս, համագործակցում է այլ պետական մարմինների հետ և ըստ անհրաժեշտության վերահսկողության ընթացքում կարող է հրավիրել այլ պետական մարմինների ներկայացուցիչներ: Տեսչական մարմինը, ըստ անհրաժեշտության, կարող է վերահսկողական աշխատանքներին ներգրավվել փորձագետներ և մասնագետներ:
7. Լիցենզիայի պահանջները խախտելը, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերը չկատարելը հիմք է տեսչական մարմնի կողմից լիցենզիայի կասեցման կամ դադարեցման վերաբերյալ լիազոր մարմին միջնորդագիր ներկայացնելու համար:
8. Վերահսկողության սուբյեկտ հանդիսացող տնտեսավարողը վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով պարտավոր է ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները, տրամադրել դրանց լուսապատճենները, կրկնօրինակները և այլ տեղեկություններ, ինչպես նաև չխոչընդոտել վերահսկողության ընթացքին, կատարել վերահսկողություն իրականացնող անձանց օրինական պահանջները: Տեսչական մարմնի գործողություններին խոչընդոտելը ենթակա է անհապաղ վերացման Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից:
9. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի ոլորտում ապօրինի շրջանառության կանխարգելման նկատմամբ հսկողություն իրականացնում են սույն օրենքով նախատեսված այլ մարմիններ՝ իրենց իրավասության շրջանակում:
10. Արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի վերաբերյալ տեղեկատվությունը մաքսային և հարկային մարմինների կողմից տրամադրվում է վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 45.9. Դիտարկումների իրականացումը

1. Դիտարկումը արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման և մեծածախ առևտրի լիցենզավորման, քվոտավորման և օրինական շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից լիցենզիայի պայմանների, օրենդրության սահմանված նորմերի խախտման կանխարգելման, բացահայտման և պատասխանատվության միջոցների կիրառման նպատակով իրականացվող գործողությունների ամբողջություն է:
2. Դիտարկումն իրականացվում է Տեսչական մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա՝ նախապես այն համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի (Գրասենյակ) հետ, որտեղ նշվում է դիտարկում իրականացնող մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, դիտարկման նպատակը, ժամանակահատվածը և դիտարկվող հարցի շրջանակը, դիտարկվող տնտեսավարող սուբյեկտի (այսուհետ՝ դիտարկվող) անվանումը:
3. Տեսչական մարմինը դիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Գրասենյակ: Հաշվետվության ձևը և ներկայացման պարբերականությունը սահմանվում է Գրասենյակի ղեկավարի հրամանով:

4. Դիտարկումն իրականացվում է առանց նախնական ծանուցման: Դիտարկման իրականացման հրամանը ծանոթացման նպատակով ներկայացվում է դիտարկվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին՝ վերջինիս պահանջով:
5. Դիտարկվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի՝ դիտարկման վայրում չգտնվելը կամ դիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանը չպահանջելը կամ ստորագրությամբ այն ստանալու փաստը չհավաստելը հիմք չէ տվյալ պահին դիտարկումը չիրականացնելու համար:
6. Յուրաքանչյուր դիտարկվողի մոտ մեկ դիտարկման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավել, քան հինգ աշխատանքային օր:
7. Դիտարկումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:

Հոդված 45.10. Արտադրական կանեփի օրինական շրջանառության ոլորտում սահմանված նորմերի խախտման դեպքում կիրառվող կարգադրագիրը

1. Տեսչական մարմինը, վերահսկողության ընթացքում (կամ) արդյունքներով իրավախախտումների հայտնաբերման դեպքում, տալիս է խախտումների վերացման վերաբերյալ պարտադիր կատարման ենթակա կարգադրագիր՝ սահմանելով կարգադրագրի կատարման ժամկետ:
2. Կարգադրագրի ձևը հաստատում է տեսչական մարմնի ղեկավարը:
3. Տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է մինչև կարգադրագրով սահմանված ժամկետի ավարտը կարգադրագրի կատարման մասին տեղեկացնել տեսչական մարմնին:
4. Կարգադրագիրը ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում տեսչական մարմնին չտեղեկացնելը համարվում է կարգադրագրի չկատարում, որն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:
5. Տեսչական մարմինը դիտարկման արդյունքում տրված կարգադրագրի կատարման նկատմամբ կարող է իրականացնել ընթացիկ հսկողություն:
6. Կարգադրագրով նախատեսված սահմանափակումները վերացվում են վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի կողմից՝ տնտեսավարող սուբյեկտի դիմումով կարգադրագրի կատարման արդյունքների հիման վրա:»

Հոդված 7. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքով նախատեսված փոփոխություններից բխող լիցենզավորման կարգում փոփոխություններ, ինչպես նաեւ քվոտավորման կարգի սահմանումը Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրականացնում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում սահմանում է լիցենզիայի հայտեր ընդունելու համար իրավասու պետական կառավարման համակարգի մարմին:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի վերջին պարբերության «վերարտադրում են» բառից հետո վերջակետ կետադրական նշանը փոխարինել լ միջակետով կետադրական նշանով եւ լրացնել հետեւյալ պարբերությունները.

«կանեփ՝ կանեփ բույսի ծաղկող կամ պտղատու գլխիկները, որոնցից բուսախեժը քամված չէ, անկախ դրանց համար օգտագործվող անվանումից

կանեփի բույս՝ ~~կաննաբիս (Cannabis) տեսակի~~ կանեփ (Cannabis) ցեղի ցանկացած բույս.

կանեփի բուսախեժ՝ քամված բուսախեժը՝ զտած կամ չզտած, որն ստացվել է կանեփի բույսից.

արտադրական կանեփի բույսի կտրոն՝ կանեփի բույսից առանձնացված մաս (ցողուն՝ տերևներով), որը օգտագործվում է վեգետատիվ բազմացման նպատակով

արտադրական կանեփ՝ սույն օրենքով նախատեսված նպատակների համար նախատեսված կանեփի մշակաբույս որում կաննաբիդիոլի (CBD) պարունակությունը գերազանցում է տետրահիդրոկաննաբինոլի (THC) պարունակությանը, ընդ որում՝ տետրահիդրոկաննաբինոլի (THC) տոկոսային պարունակությունը նմուշառված զանգվածում հավասար կամ ցածր է 0,3 տոկոսից

արտադրական կանեփի մշակություն՝ կանեփի բույսի աճեցնելու ամբողջ գործընթացը

արտադրական կանեփի վերամշակման գործընթաց՝ արտադրական կանեփի բուսախեժի առանձնացումը բույսերից, որոնցից այն ստացվում է, ինչպես նաեւ այն գործընթացները որոնց արդյունքում ~~առաջանում է~~ ստացվում է յուղ, թուղթ, շինանյութ, թել կամ այլ վերամշակվող նյութեր

իրական շահառու՝ «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի իմաստով իրական շահառու հանդիսացող անձ

փոխկապակցված անձ՝ անձի հետ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ, 26-րդ, 27-րդ կետերի իմաստով փոխկապակցված համարվող անձ:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով.

«*Հոդված 8.1 Թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հետ կապված գործունեության բնագավառում լիցենզիաների տրամադրման խորհրդատվական հանձնաժողովը*

Լիցենզավորող մարմնին թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հետ կապված գործունեության բնագավառում լիցենզիաների տրամադրման վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն տալու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել հանձնաժողով: Խորհրդատվական եզրակացություն տալու դեպքերը եւ կարգը նախատեսվում են հանձնաժողովի աշխատակարգով եւ լիցենզավորման կարգով:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի

1. 2-րդ մասի «ժամկետով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:»,

2. 3-րդ մասի «օրենքով» բառից հետո լրացնել « եւ սույն օրենքով:» բառերը:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ, գյուղատնտեսական կամ արդյունաբերական նպատակներով՝ սույն օրենքվ նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ սույն օրենքի 31-33-րդ հոդվածներով նախատեսված նպատակներով:»:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածի

1. հոդվածում «հավաստագիր» բառը իր բոլոր հոլովաձեւերով փոխարինել «թույլտվություն» բառով՝ համապատասխան հոլովաձեւերով:

2. 2-րդ մասը լրացնել չորրորդ պարբերությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Արտահանման կամ ներմուծման թույլտվության տրամադրման համար կարող է գանձվել պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված դեպքերում եւ չափով: Այն դեպքում, երբ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված է արտահանման կամ ներմուծման թույլտվության տրամադրման համար պետական տուրք, ապա արտահանման կամ ներմուծման թույլտվության համար դիմողը պարտավոր է վճարել պետական տուրքը թույլտվության համար դիմելուց առաջ:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել Գլուխ 5.1-ով հետեւյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 5.1.

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՆԵՓԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՆԵՓԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 45.1. Արտադրական կանեփի շրջանառության իրավական կարգավորման առանձնահատկությունները

1. Սույն գլխով սահմանվում են արտադրական կանեփի շրջանառության, արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզավորման, ապօրինի շրջանառության կանխարգելման կարգի առանձնահատկությունները:

2. Սույն գլխով կարող են նախատեսվել արտադրական կանեփի վերաբերյալ սույն օրենքով թմրամիջոցների համար նախատեսված կարգավորումներից տարբերվող կարգավորումներ, որի դեպքում գործում են սույն գլխով սահմանված կարգավորումները:

3. Արտադրական կանեփի արտադրությունը, արտահանումը, ներմուծումը կամ մեծածախ առեւտուրը չեն համարվում դեղերի արտադրություն կամ շրջանառություն եւ չեն կարգավորվում «Դեղերի մասին» օրենքով:

Հոդված 45.2. Արտադրական կանեփի օրինական շրջանառությունը

1. Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրական կանեփի օրինական շրջանառությունը սույն օրենքով սահմանված նպատակներով եւ գործողությունների շրջանակներում՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

2. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության իրականացման համար տրվում են «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաեւ արտադրական կանեփի ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի լիցենզիաներ:

3. Արգելվում է արտադրական կանեփի արտադրությունը անձնական օգտագործման նպատակով:

Հոդված 45.3. Արտադրական կանեփի արտադրությունը

1. Արտադրական կանեփի արտադրությամբ կարող է զբաղվել միայն իրավաբանական անձը, որը ստացել է արտադրական կանեփի արտադրության լիցենզիա:

2. Արտադրական կանեփի արտադրության լիցենզիայով թույլատրվող գործունեության ձեւերն են արտադրական կանեփի ~~մշակումը եւ արտադրությունը~~ մշակությունը և վերամշակումը:

3. Արտադրական կանեփի մշակությունը թույլատրվում է միայն փակ տարածքներում՝ ~~ջերմոցներում~~ ջերմատներում, տնկարաններում, սածիլանոցներում, որոնց ներկայացվող պահանջները սահմանվում են լիցենզավորման կարգում:

4. Արտադրական կանեփի արտադրության լիցենզիա ստացած անձը կարող է զբաղվել ինչպես մշակությամբ եւ վերամշակմամբ միասին, այնպես էլ այդ գործողություններից մեկով:

5. Արտադրական կանեփի արտադրության լիցենզիա ունեցող անձը կարող է իր արտադրանքը փոխանցել միայն արտադրական կանեփի արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի լիցենզիա ունեցող անձի:

Հոդված 45.4. Արտադրական կանեփի արտադրության գործունեության ձեւերի հետ կապված այլ գործողությունները

1. Արտադրական կանեփի արտադրության լիցենզիան ներառում է նաեւ սույն օրենքի 45.3-րդ հոդվածով նախատեսված գործունեության ձեւերի հետ կապված այլ գործողությունների կատարում, այդ թվում՝

1) արտադրական կանեփի բուսախեժի, թղթի, յուղի, թելի, շինանյութի եւ այլ վերամշակվող նյութերի արտադրության նպատակով ~~արտադրական կանեփի բույսերի կամ սերմերի~~ արտադրական կանեփի բույսերի, արտադրական կանեփի բույսի կտրոնների, սածիլների կամ սերմերի ձեռքբերում մշակման նպատակով՝ բացառությամբ ներմուծման.

2) արտադրական կանեփ բույսերի, արտադրական կանեփի փաթեթավորում, տեղափոխում, պահեստավորում, տիրապետում.

3) արտադրական կանեփի բույսերի, արտադրական կանեփի կամ արտադրական կանեփի բուսախեժի ոչնչացում.

4) արտադրական կանեփի ~~հետազոտություն~~՝ նմուշառում և լաբորատոր փորձաքննություն՝ որոշելու համար կաննաբիդիոլի կամ տետրահիդրոկաննաբինոլի կոնցենտրացիան՝ տոկոսային պարունակությունը, արտադրական կանեփի բույսերի նմուշառվող հատվածներում, կամ ~~կանեփի բույսերի տեղափոխումը բույսերի հետազոտություն իրականացնող, համապատասխան լիցենզիա եւ մասնագետ ունեցող անձանց մոտ~~ կանեփի բույսերի նմուշների տեղափոխումը փորձաքննություն իրականացնող համապատասխան լաբորատորիա~~;~~

Հոդված 45.5. Արտադրական կանեփի ներմուծումը, արտահանումը կամ մեծածախ առեւտուրը

1. Արտադրական կանեփի ներմուծմամբ, արտահանմամբ կամ մեծածախ առեւտրով կարող է զբաղվել միայն այն իրավաբանական անձը, որը ստացել է արտադրական կանեփի ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի լիցենզիա:

2. ~~Կանեփի բույսի, սերմերի~~ Արտադրական կանեփի բույսի, արտադրական կանեփի բույսի կտրոնների, սածիլների և սերմերի ներմուծում Հայաստանի Հանրապետություն թույլատրվում է արտադրական կանեփի ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի լիցենզիայի առկայության դեպքում

3. Արտադրական կանեփի արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի իրականացման գործունեության իրականացման համար լիցենզիա ունեցող անձը կարող է իր արտադրանքը փոխանցել միայն արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաեւ արտադրական կանեփի ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի գործունեություն իրականացնելու համար լիցենզիա ունեցող անձի:

Հոդված 45.6. Արտադրական կանեփի արտադրության եւ ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի լիցենզավորման առանձնահատկությունները

1. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման համակարգի մարմինը:

2. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիաները տրվում են մինչեւ տասը տարի ժամկետով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված լիցենզավորման կարգում արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզավորման համար նախատեսվում են պահանջներ, այդ թվում՝ լիցենզիա ստանալու համար դիմողի կողմից բիզնես-ծրագրի ներկայացման եւ դրա բովանդակության, հիմնավորումների, դիմողի ֆինանսական վիճակի, կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) նվազագույն չափի վերաբերյալ, ինչպես նաեւ այլ պահանջներ:

4. Անձը կարող է զբաղվել արտադրական կանեփի հետ կապված գործունեությամբ միայն եթե դիմել է արտադրական կանեփի հետ կապված գործունեության տեսակների լիցենզիա ստանալու համար եւ օրենքով սահմանված կարգով ստացել է այդ լիցենզիան՝ անկախ այլ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ պրեկուրսորների հետ կապված գործունեության լիցենզիա ունենալու հանգամանքից:

5. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիայի ստացման համար դիմողը պարտավոր է բացահայտել եւ լիցենզիա ստանալու հայտի հետ միասին լիցենզավորման կարգում սահմանված ձեւով ներկայացնել փոխկապակցված անձանց եւ իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

6.Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա չեն կարող ստանալ այն անձինք, որոնց մասնակիցները, կամ փոխկապակցված անձինք, իրական շահառուները կամ արտադրության կամ ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի ընթացքում կանեփի, կանեփի բույսի, դրա սերմերի հետ անմիջական շփում ունեցող անձինք (այսուհետ՝ աշխատակից).

1) ունեն դատվածություն թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի հետ կապված հանցագործության համար ակախ դատվածությունը հանված կամ մարված լինելու հանգամանքից, կամ ենթարկվել են այդպիսի վարչական իրավախախտման համար

2) տառապում է թմրամոլությամբ:

7. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա ստացած անձինք նախքան արտադրական կանեփի հետ կապված գործունեությանը ներգրավելը լիցենզավորող մարմնին են ներկայացնում աշխատակիցների տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, հասցե, անձնագրային տվյալներ, թմրամիջոցների կամ հոգեմետ դեղերի հետ կապված դիտավորյալ հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվության ենթարկված լինելու կամ այդպիսի վարչական իրավախախտման կատարման համար պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տեղեկություն: Լիցենզավորող մարմինը վարում է աշխատակիցների ռեեստր: Թմրամիջոցների կամ հոգեմետ դեղերի հետ կապված դիտավորյալ հանցագործության կատարման համար դատապարտված կամ այդպիսի վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկված կամ թմրամոլությամբ տառապող անձինք չեն կարող հանդիսանալ աշխատակիցներ: Լիցենզավորման կարգով կարող են նախատեսվել աշխատակիցներին վերաբերող այլ պահանջներ: Աշխատակիցների ռեեստրի տվյալներին հասանելիություն պետք է ունենան նաեւ լիցենզավորված անձի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմինները:

Հոդված 45.7. Արտադրական կանեփի քվոտավորման պահանջը

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը քվոտավորում է արտադրական կանեփի արտադրությունը, ներմուծումը արտահանումը կամ մեծածախ առեւտուրը:

2. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիան տրամադրվում է ըստ քվոտաների:

3. Քվոտավորումը կարող է լինել տարբերակված ըստ մի շարք չափանիշների, այդ թվում՝ ըստ մեկ սուբյեկտի առավելագույն եւ նվազագույն արտադրության կամ ներմուծման, արտահանման կամ մեծածախ առեւտրի ծավալներ/քանակ սահմանելով, ըստ տարիների՝ կոնկրետ սուբյեկտի համար տարբերակված կամ նույնական քվոտա սահմանելով,

4. Քվոտավորման տարբերակումը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

5. Քվոտայի սպառվելը հանդիսանում է լիցենզիայի հայտի մերժման հիմք:

6.Քվոտայով նախատեսված քանակական սահմանափակումների խախտումը համարվում է լիցենզիայի դադարեցման հիմք:

7. Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով քվոտավորման պահանջներ սահմանված լինելու դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրով քվոտավորման կանոնները: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող է նախատեսվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրին համապատասխան քվոտավորմանը վերաբերյալ այլ պայմանների բավարարման պահանջներ:

8. Արտաքին առեւտրի ոլորտում արտադրական կանեփի արտահանելու կամ ներմուծելու սահմանափակումների առկայության դեպքում բացի սույն օրենքով սահմանված լիցենզավորումից անձը պետք է ստանա նաեւ «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքով նախատեսված լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Հոդված 45.8. Պետական վերահսկողությունը արտադրական կանեփի օրինական շրջանառության ոլորտում

~~1. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաեւ արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի ոլորտում օրինական շրջանառության նկատմամբ պետական վերահսկողությունն~~

~~իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ օրենքով սահմանված կարգով:~~

~~2. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաեւ արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի ոլորտում ապօրինի շրջանառության կանխարգելման նկատմամբ հսկողություն իրականացնում են սույն օրենքով նախատեսված այլ մարմիններ՝ իրենց իրավասության շրջանակում:~~

1. Արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման և մեծածախ առևտրի լիցենզավորման, քվոտավորման և օրինական շրջանառության կարգավորման նպատակով սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված տեսչական մարմնի կողմից:
2. Տեսչական մարմնի կողմից վերահսկողությունը սույն հոդվածով սահմանված դեպքերում իրականացվում է ստուգումների, ուսումնասիրությունների և դիտարկումների միջոցով:
3. Տեսչական մարմնի կողմից ստուգումները և ուսումնասիրությունները իրականացվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով:
4. Տեսչական մարմինը իրականացնում է նմուշառում և փորձաքննություն՝ արտադրանքի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին պարզելու նպատակով:
5. Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում փորձաքննությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված լաբորատորիայում՝ մինչև տեսչական մարմնի կողմից լաբորատոր կարողությունների ձևավորումը:
6. Տեսչական մարմինը, վերահսկողություն իրականացնելիս, համագործակցում է այլ պետական մարմինների հետ և ըստ անհրաժեշտության վերահսկողության ընթացքում կարող է հրավիրել այլ պետական մարմինների ներկայացուցիչներ: Տեսչական մարմինը, ըստ անհրաժեշտության, կարող է վերահսկողական աշխատանքներին ներգրավվել փորձագետներ և մասնագետներ:
7. Լիցենզիայի պահանջները խախտելը, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերը չկատարելը հիմք է տեսչական մարմնի կողմից լիցենզիայի կասեցման կամ դադարեցման վերաբերյալ լիազոր մարմին միջնորդագիր ներկայացնելու համար:
8. Վերահսկողության սուբյեկտ հանդիսացող տնտեսավարողը վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով պարտավոր է ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները, տրամադրել դրանց լուսապատճենները, կրկնօրինակները և այլ տեղեկություններ, ինչպես նաև չխոչընդոտել վերահսկողության ընթացքին, կատարել վերահսկողություն իրականացնող անձանց օրինական պահանջները: Տեսչական մարմնի գործողություններին խոչընդոտելը ենթակա է անհապաղ վերացման Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից:
9. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի ոլորտում ապօրինի շրջանառության կանխարգելման նկատմամբ հսկողություն իրականացնում են սույն օրենքով նախատեսված այլ մարմիններ՝ իրենց իրավասության շրջանակում:
10. Արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի վերաբերյալ տեղեկատվությունը մաքսային և հարկային մարմինների կողմից տրամադրվում է վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 45.9. Դիտարկումների իրականացումը

1. Դիտարկումը արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման և մեծածախ առևտրի լիցենզավորման, քվոտավորման և օրինական շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից լիցենզիայի պայմանների, օրենդրության սահմանված նորմերի խախտման կանխարգելման, բացահայտման և պատասխանատվության միջոցների կիրառման նպատակով իրականացվող գործողությունների ամբողջություն է:
2. Դիտարկումն իրականացվում է Տեսչական մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա՝ նախապես այն համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի (Գրասենյակ) հետ, որտեղ նշվում է

դիտարկում իրականացնող մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, դիտարկման նպատակը, ժամանակահատվածը և դիտարկվող հարցի շրջանակը, դիտարկվող տնտեսավարող սուբյեկտի (այսուհետ՝ դիտարկվող) անվանումը:
3. Տեսչական մարմինը դիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Գրասենյակ: Հաշվետվության ձևը և ներկայացման պարբերականությունը սահմանվում է Գրասենյակի ղեկավարի հրամանով:
4. Դիտարկումն իրականացվում է առանց նախնական ծանուցման: Դիտարկման իրականացման հրամանը ծանոթացման նպատակով ներկայացվում է դիտարկվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին՝ վերջինիս պահանջով:
5. Դիտարկվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի՝ դիտարկման վայրում չգտնվելը կամ դիտարկում իրականացնելու վերաբերելի հրամանը չպահանջելը կամ ստորագրությամբ այն ստանալու փաստը չհավաստելը հիմք չէ տվյալ պահին դիտարկումը չիրականացնելու համար:
6. Յուրաքանչյուր դիտարկվողի մոտ մեկ դիտարկման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավել, քան հինգ աշխատանքային օր:
7. Դիտարկումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:

Հոդված 45.10. Արտադրական կանեփի օրինական շրջանառության ոլորտում սահմանված նորմերի խախտման դեպքում կիրառվող կարգադրագիրը

1. Տեսչական մարմինը, վերահսկողության ընթացքում (կամ) արդյունքներով իրավախախտումների հայտնաբերման դեպքում, տալիս է խախտումների վերացման վերաբերյալ պարտադիր կատարման ենթակա կարգադրագիր՝ սահմանելով կարգադրագրի կատարման ժամկետ:
2. Կարգադրագրի ձևը հաստատում է տեսչական մարմնի ղեկավարը:
3. Տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է մինչև կարգադրագրով սահմանված ժամկետի ավարտը կարգադրագրի կատարման մասին տեղեկացնել տեսչական մարմնին:
4. Կարգադրագիրը ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում տեսչական մարմնին չտեղեկացնելը համարվում է կարգադրագրի չկատարում, որն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:
5. Տեսչական մարմինը դիտարկման արդյունքում տրված կարգադրագրի կատարման նկատմամբ կարող է իրականացնել ընթացիկ հսկողություն:
6. Կարգադրագրով նախատեսված սահմանափակումները վերացվում են վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի կողմից՝ տնտեսավարող սուբյեկտի դիմումով կարգադրագրի կատարման արդյունքների հիման վրա:»

Հոդված 7. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքով նախատեսված փոփոխություններից բխող լիցենզավորման կարգում փոփոխություններ, ինչպես նաեւ քվոտավորման կարգի սահմանումը Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրականացնում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում սահմանում է լիցենզիայի հայտեր ընդունելու համար իրավասու պետական կառավարման համակարգի մարմին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-963-05.05.2021-ՏՀ-011/1)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1.	2.	3.	4.	5.
1.	*ՀՀ կառավարություն*	««Թմրամիջոցների եվ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» Օրենքի նախագծի հոդվածի 1-ին	Առաջարկվում է օրենքի 1-ին հոդվածի կանեփի բույս հասկացության մեջ «կաննաբիս (Cannabis) տեսակ» բառերը փոխարինել «կանեփ (Cannabis) ցեղի» բառերով, քանի որ Cannabis-ը ցեղ է, ոչ թե տեսակ և լատիներեն անվանման հայերեն թարգմանությունը կանեփ է:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի հոդվածի 1-ին	Օրենքի 1-ին հոդվածում առաջարկվում է ավելացնել «արտադրական կանեփի բույսի կտրոն» հասկացությունը հետևյալ ձևակերպմամբ «կանեփի բույսից առանձնացված մաս (ցողուն՝ տերևներով), որը օգտագործվում է վեգետատիվ բազմացման նպատակով»	Ընդունվել է	Ընդունվել է

3.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 1-ին հոդված	Օրենքի 1-ին հոդվածի «արտադրական կանեփի վերամշակման գործընթաց» հասկացության մեջ «ստացվում է» բառը փոխարինել «առաջանում է» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
4	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 6-րդ հոդված	Օրենքի 45. 3 հոդվածի 2-րդ ենթակետի «մշակումը և արտադրությունը» բառերը փոխարինել «մշակությունը և վերամշակումը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
5	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 6-րդ հոդված	Օրենքի 45. 3 հոդվածի 3-րդ ենթակետի «ջերմոց» բառը փոխարինել «ջերմատուն» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 6-րդ հոդված	Օրենքի 45. 4 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «արտադրական կանեփի բույսերի կամ սերմերի» բառերը փոխարինել «արտադրական կանեփի բույսերի, արտադրական կանեփի բույսի կտրոնների, սածիլների կամ սերմերի» բառերով, քանի որ մշակության նպատակով բացի մայր բույսերից հնարավոր է ներմուծել, դրա կտրոնները, սածիլները, կամ սերմերը:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 6-րդ հոդված	Օրենքի 45. 4 հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի «արտադրական կանեփի հետազոտություն» բառերը փոխարինել «արտադրական կանեփի նմուշառում և	Ընդունվել է	Ընդունվել է

			լաբորատոր փորձաքննություն» բառերով և «կամ »բառից հետո խմբագրել հետևյալ կերպ « կանեփի բույսերի նմուշների տեղափոխումը փորձաքննություն իրականացնող համապատասխան լաբորատորիա»:		
8.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագծի 6-րդ հոդված	Օրենքի 45. 5 հոդվածի 2-րդ կետի «Կանեփի բույսի, սերմերի» բառերը փոխարինել «արտադրական կանեփի բույսի, արտադրական կանեփի բույսի կտրոնների, սածիլների և սերմերի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	*ՀՀ կառավարություն*	Օրենքի նախագիծ	Օրենքի բոլոր հոդվածներում «կանաբիդիոլ» բառը փոխարինել «կաննաբիդիոլ»:	Ընդունվել է	Ընդունվել է
10	*ՀՀ կառավարություն*	«Պետական տուրքի մասին Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 18. 15 կետ	«Պետական տուրքի մասին Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 18. 15 կետի «մինչեւ 1 տոննա քվոտայի բառերից առաջ լրացնել «ծաղկագլխի և կանաչ զանգվածի» բառերը, «մինչեւ 100 լիտր քվոտայի» բառերից առաջ լրացնել «կաննաբիդիոլի յուղի» բառերը,	Ընդունվել է	Ընդունվել է

			«1 տոննան գերազանցող քվոտայի» բառերից առաջ լրացնել «ծաղկագլխի և կանաչ զանգվածի» բառերը, «100 լիտր գերազանցող քվոտայի» բառերից առաջ լրացնել «կաննաբիդիոլի յուղի» բառերը: « յուրաքանչյուր կանեփի բույսի համար» բառերը փոխարինել « յուրաքանչյուր կանեփի բույսի կամ 350-500 հատ կտրոնների համար» բառերով և ավելացնել տող հետևյալ բովանդակությամբ «յուրաքանչյուր գրամ սերմի համար բազային տուրքի 5000-ապատիկի չափով» հաշվի առնելով, որ կանեփի սերմերի 1 գրամը պարունակում է 50-60 հատ սերմ, որից յուրաքանչյուրից հնարավոր է ստանալ 1 բույսի, իսկ յուրաքանչյուր բույսից 350-500 հատ կտրոններ ապա 1 գրամ սերմից հնարավոր է ստանալ շուրջ 17 500-25 000 հատ կտրոն, հետևաբար կանեփի յուրաքանչյուր բույսի կամ 350-500 հատ կտրոնների համար սահմանված բազային տուրքի 100-ապատիկ չափը, 1 գրամի համար ենթադրվում է 100-ապատիկից 50-անգամ ավել, այսինքն՝ 5000-ապատկի չափով:		

11	*ՀՀ կառավարություն*	««Թմրամիջոցների եվ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» Օրենքի նախագծի 45.8 հոդված	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «1. Արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման և մեծածախ առևտրի լիցենզավորման, քվոտավորման և օրինական շրջանառության կարգավորման նպատակով սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված տեսչական մարմնի կողմից: 2. Տեսչական մարմնի կողմից վերահսկողությունը իրականացվում է ստուգումների, ուսումնասիրությունների և դիտարկումների միջոցով: 3. Տեսչական մարմնի կողմից ստուգումները և ուսումնասիրությունները իրականացվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով: 4. Տեսչական մարմինը իրականացնում է նմուշառում և փորձաքննություն՝ արտադրանքի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին պարզելու նպատակով: 5. Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում փորձաքննությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված լաբորատորիայում՝ մինչև տեսչական մարմնի կողմից լաբորատոր կարողությունների ձևավորումը: 6. Տեսչական մարմինը, վերահսկողություն իրականացնելիս, համագործակցում է այլ պետական մարմինների հետ և ըստ անհրաժեշտության վերահսկողության	Ընդունվել է	Ընդունվել է

			ընթացքում կարող է հրավիրել այլ պետական մարմինների ներկայացուցիչներ: Տեսչական մարմինը, ըստ անհրաժեշտության, կարող է վերահսկողական աշխատանքներին ներգրավվել փորձագետներ և մասնագետներ: 7. Լիցենզիայի պահանջները խախտելը, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերը չկատարելը հիմք է տեսչական մարմնի կողմից լիցենզիայի կասեցման կամ դադարեցման վերաբերյալ լիազոր մարմին միջնորդագիր ներկայացնելու համար: 8. Վերահսկողության սուբյեկտ հանդիսացող տնտեսավարողը վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով պարտավոր է ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները, տրամադրել դրանց լուսապատճենները, կրկնօրինակները և այլ տեղեկություններ, ինչպես նաև չխոչընդոտել վերահսկողության ընթացքին, կատարել վերահսկողություն իրականացնող անձանց օրինական պահանջները: Տեսչական մարմնի գործողություններին խոչընդոտելը ենթակա է անհապաղ վերացման Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից: 9. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի ոլորտում ապօրինի շրջանառության կանխարգելման նկատմամբ հսկողություն իրականացնում են սույն օրենքով նախատեսված այլ մարմիններ՝ իրենց իրավասության շրջանակում: 10. Արտադրական կանեփի արտադրության, արտահանման,		

			ներմուծման կամ մեծածախ առևտրի վերաբերյալ տեղեկատվությունը մաքսային և հարկային մարմինների կողմից տրամադրվում է վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»		
12	***ՀՀ կառավարություն***	««Թմրամիջոցների եվ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» Օրենքի նախագծում ավելացնել 45.9 հոդված	*Հոդված 45.9. Դիտարկումների իրականացումը* 1. Դիտարկումը արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման և մեծածախ առևտրի լիցենզավորման, քվոտավորման և օրինական շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից լիցենզիայի պայմանների, օրենդրության սահմանված նորմերի խախտման կանխարգելման, բացահայտման և պատասխանատվության միջոցների կիրառման նպատակով իրականացվող գործողությունների ամբողջություն է: 2. Դիտարկումն իրականացվում է Տեսչական մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա՝ նախապես այն համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի (Գրասենյակ) հետ, որտեղ նշվում է դիտարկում իրականացնող մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, դիտարկման նպատակը, ժամանակահատվածը և դիտարկվող հարցի շրջանակը, դիտարկվող տնտեսավարող սուբյեկտի (այսուհետ՝ դիտարկվող) անվանումը: 3. Տեսչական մարմինը դիտարկման	Ընդունվել է	Ընդունվել է

			արդյունքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Գրասենյակ: Հաշվետվության ձևը և ներկայացման պարբերականությունը սահմանվում է Գրասենյակի ղեկավարի հրամանով: 4. Դիտարկումն իրականացվում է առանց նախնական ծանուցման: Դիտարկման իրականացման հրամանը ծանոթացման նպատակով ներկայացվում է դիտարկվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին՝ վերջինիս պահանջով: 5. Դիտարկվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի՝ դիտարկման վայրում չգտնվելը կամ դիտարկում իրականացնելու վերաբերևյալ հրամանը չպահանջելը կամ ստորագրությամբ այն ստանալու փաստը չհավաստելը հիմք չէ տվյալ պահին դիտարկումը չիրականացնելու համար: 6. Յուրաքանչյուր դիտարկվողի մոտ մեկ դիտարկման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավել, քան հինգ աշխատանքային օր: 7. Դիտարկումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:		
13	***<< կառավարություն***	««Թմրամիջոցների եվ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու	*Հոդված 45.10. Արտադրական կանեփի օրինական շրջանառության ոլորտում սահմանված նորմերի խախտման դեպքում կիրառվող կարգադրագիրը* 1. Տեսչական մարմինը, վերահսկողության ընթացքում (կամ) արդյունքներով իրավախախտումների հայտնաբերման դեպքում, տալիս է խախտումների վերացման վերաբերյալ պարտադիր	Ընդունվել է	Ընդունվել է

		մասին» Օրենքի նախագծում ավելացնել 45.10 հոդված	կատարման ենթակա կարգադրագիր՝ սահմանելով կարգադրագրի կատարման ժամկետ: 2. Կարգադրագրի ձևը հաստատում է տեսչական մարմնի ղեկավարը: 3. Տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է մինչև կարգադրագրով սահմանված ժամկետի ավարտը կարգադրագրի կատարման մասին տեղեկացնել տեսչական մարմնին: 4. Կարգադրագիրը ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում տեսչական մարմնին չտեղեկացնելը համարվում է կարգադրագրի չկատարում, որն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով: 5. Տեսչական մարմինը դիտարկման արդյունքում տրված կարգադրագրի կատարման նկատմամբ կարող է իրականացնել ընթացիկ հսկողություն: 6. Կարգադրագրով նախատեսված սահմանափակումները վերացվում են վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի կողմից՝ տնտեսավարող սուբյեկտի դիմումով կարգադրագրի կատարման արդյունքների հիման վրա:»		